

## Հարց

Ի՞նչպես է իրականացվում Օպերատիվ աշխատանքի կազմակերպումը:

### Պատասխան

Մատակարարը եւ Սպառողը պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչեւ դեկտեմբերի 20-ը միմյանց ներկայացնել մատակարարի եւ Սպառողի իրավասու անձանց կողմից հաստատված՝

ա)օպերատիվ խոսակցություններ վարելու իրավունք ունեցող աշխատակիցների ցուցակը,

բ)օպերատիվ խոսակցություններ վարելու եւ փոխանջատումներ կատարելու իրավունք ունեցող օպերատիվ անձնակազմի ցուցակը:

գ)Սպառողի կողմից մատակարարի օպերատիվ ենթակայությանը սարքավորումների եւ ՌՊԱ սարքվածքների հանձնումը կատարվում է հետեւյալ ընթացակարգով.

դ)ամեն տարի մինչեւ նոյեմբերի 1-ը մատակարարը Սպառողին է ներկայացնում իր օպերատիվ ենթակայությանը հանձնման ենթակա սարքավորումների եւ ՌՊԱ սարքվածքների ցանկը.

ե)ամեն տարի մինչեւ դեկտեմբերի 1-ը Սպառողը մատակարարին է ներկայացնում վերջինիս ներկայացրած ցանկում ընդգրկված սարքավորումների միացման սխեմաները՝ նշելով սարքավորումների եւ ՌՊԱ սարքվածքների հարաչափերը:

Սպառողի սարքավորումների եւ ՌՊԱ սարքվածքների հանձնումը մատակարարի օպերատիվ ենթակայությանը մինչեւ դեկտեմբերի 25-ը ձեւակերպվում է Սպառողի իրավասու անձի եւ մատակարարի տեխնիկական ղեկավարի միջեւ կնքված համաձայնագրով, որը կցվում է Պայմանագրին եւ հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

(Մ. Աթասյան)